ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՁԱՅՆԸ

և վառ գույները

«Ինչո՞ւ Երկնային Հայրը չի հեռացնում բարձր ձայները»,- հարցրեց Շառլոթը:

ԷՐՈՆԱՅՄ ՅՈՒՆ ԱՐՈՒԵՏ ԱՄԻՍ

Հեթեր Սալիվան
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել ԱՄՆ-ում:

Շառլոթն ատում էր բարձր ձայները: Նրան դուր չէր գալիս, թե ինչպես էին ձայները հնչում իր ականջներում կամ արձագանքում գլխում: Նույնիսկ, երբ նա գիտեր, որ անվտանգ է, միևնույն է, լարվում էր մեքենաների ճռռոցից, ամբոխի բացականչություններից կամ թմբուկների հարվածներից:

Եվ Շառլոթը *իսկապես* չէր սիրում հրավառություն:

Նրա ընտանիքը շատ բաներ էր փորձում նրան մխիթարելու համար, երբ բարձր ձայներ էին լսվում: Հայրիկը նրա համար գնեց հատուկ ականջակալներ, որոնք օգնում են արգելափակել աղմուկը: Երբ կայծակն էր որոտում, մայրիկը նրա հետ միասին թաքնվում էր վերմակի տակ: Շառլոթը նաև աղոթում էր օգնության համար, որպեսզի չվախենար:

Այդ ամենն օգտակար եղավ: Բայց բարձր ձայները դեռ վախեցնում էին նրան:

«Այս երեկո մենք գնում ենք այգում հատուկ հրավառության տոնակատարության»,- ասաց մայրիկը Շառլոթին: «Ցանկանո՞ւմ ես գալ»:

Շառլոթը խոժոռվեց: «Բայց հրավառությունները բարձր ձայն են արձակում»:

«Հիմա, երբ դու մեծացել ես, գուցե հրավառություն դիտելն ավելի զվարճալի կլինի»,- ասաց մայրիկը: «Քո բոլոր ընկերներն այնտեղ կլինեն: Մենք կարող ենք մեզ հետ վերցնել նույնիսկ քո հատուկ ականջակալները: Ի՞նչ ես կարծում, կարո՞ղ ես փորձել»:

Շառլոթը հոգոց հանեց: «Լավ: Կարծում եմ՝ կփորձեմ»:

Այգում հրավառության տոնակատարությունը հիանալի կերպով սկսվեց: Շառլոթը և նրա ընկերները վազում էին բացատում՝ հյուրասիրություններ բաժանելով և խաղեր խաղալով: Շուտով երկինքը մթնեց: Շառլոթը նստեց և դրեց ականջակալները, մինչ նա նյարդայնացած նայում էր երկնքին:

ԲՈՒՄ: ԲՈՒՄ: ԲՈՒՄ:

Շառլոտի սիրտն ավելի արագ էր բաբախում, իսկ կրծքավանդակը սեղմվում էր: Նա վեր թռավ տեղից և փորձեց փախչել շուրջբոլորը հնչող պայթյուններից:

Մայրիկը վազեց Շառլոթի հետևից և իր գիրկն առավ նրան: Նրանք նորից նստեցին, և մայրիկը գրկեց նրան: Արցունքները հոսեցին Շառլոթի այտերի վրայով:

«Ցավում եմ, որ այն վախեցրեց քեզ»,- ասաց մայրիկը: «Ես քո կողքին եմ: Արի կենտրոնանանք գույների վրա, որպեսզի դու այդքան շատ չնկատես ձայնը: Ի՞նչ ես տեսնում դու»:

Շառլոթը խորը շունչ քաշեց: «Ես տեսնում եմ ոսկեգույն, կարմիր և կանաչ գույներ»:

«Այժմ դիմենք քո հոտառությանը»,- ասաց մայրիկը: «Ի՞նչ հոտ ես զգում»:

«Ես զգում եմ ծխի և թարմ խոտի բույրը»,- ասաց Շառլոթը: «Եվ ադիբուդիի հոտը»:

«Ուրիշ ի՞նչ զգայարան կարող ես գործի դնել այս պահին»:

Շառլոթը փակեց աչքերը: «Ես զգում եմ դրանք: Երբ հրավառությունը պայթում է, ես իմ կրծքում ցնցում եմ զգում»:

«Կարո՞ղ ես ինչ-որ համ զգալ»,- հարցրեց մայրիկը:

Շառլոթը դուրս հանեց լեզուն. «Ես չեմ զգում հրավառության համը»,- ծիծաղեց նա:

Այս ամենը հետաքրքրություն առաջացրեց Շառլոթի մոտ: *Ինչպե՞ս են մարդիկ տարբեր գույներ ստեղծում,*- մտածեց նա: *Ինչո՞ւ են պայթում հրավառությունները: Դրանք ինչպե՞ս են տարբեր ձևեր ստանում:* Հրավառություններն այժմն ինձ այնքան էլ վախեցնող չէին թվում:

«Մայրիկ, հրավառությունները հրաշալի են»,- ասաց Շառլոթը:

Երբ մայրիկն այդ գիշեր Շառլոթին պառկեցրեց անկողնում, նա հարցրեց. «Ինչո՞ւ Երկնային Հայրը չի պատասխանում իմ աղոթքներին, երբ ես խնդրում եմ Նրան հեռացնել բարձր ձայները»:

Մայրիկը մի պահ մտածեց: «Երկնային Հայրը միշտ չէ, որ հեռացնում է սարսափելի բաները»,- ասաց նա: «Բայց երբեմն Նա օգնում է մեզ տեսնել իրերն այլ կերպ կամ տալիս է մարդկանց, ովքեր օգնում են մեզ մխիթարվել»:

«Ինչպես նա օգնեց ինձ այս երեկո»,- ասաց Շառլոթը:

«Ճիշտ է»,- ասաց մայրիկը: «Դու մասնակցեցիր հրավառությանը, թեև վախենում էիր: Ապա Երկնային Հայրն օգնեց քեզ ցրել քո վախերը: Նա նաև օգնեց քեզ տեսնել հրավառության գեղեցկությունը՝ օգտագործելով քո մյուս զգայարանները»:

Շառլոթը մտածեց երկնքի վառ գույների մասին և ժպտաց: Նա այժմ էլ չի սիրում բարձր ձայներ: Դրանք շարունակում են վախեցնել նրան: Սակայն նա գիտի, որ Երկնային Հայրը կարող է միշտ օգնել իրեն լինել համարձակ: ●

«Մի՛ վախեցիր, որովհետև ես քեզ հետ եմ» (Եսայիա 41.10):